ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

6 փետրվարի 2015 թվականի **թիվ 2** քաղ. Մոսկվա

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրով նախատեսված արձանագրությունների նախագծերի մասին

Ի կատարումն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 113 որոշման՝

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Ղրղզստանի Հանրապետության կառավարությունների հետ համատեղ ավարտել «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրով նախատեսված արձանագրությունների նախագծերի նախապատրաստման աշխատանքները եւ մինչեւ 2015 թվականի փետրվարի 20-ն ապահովել նշված արձանագրությունների նախագծերի ներկայացումը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Ղրղզստանի Հանրապետության ղեկավարների ստորագրմանը:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**